




CHILDREN
OF ARMENIA
FUND



From
the People of Japan

Մամլո հաղորդագրություն

օգոստոսի 29, 2022

Որակապես նոր հասարակական տրանսպորտ Լոռու մարզում

ԵՐԵՎԱՆ — «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) և ՀՀ-ում ճապոնիայի դեսպանատունը համատեղ նշում են Լոռու մարզի հասարակական տրանսպորտի ցանցում նոր, հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված ավտոբուսի գործարկումը, ինչը հանդիսանում է Լոռու մարզի հասարակական տրանսպորտի ցանցի բարեկարգման խոշոր ծրագրի մաս: Այս ծրագրի շնորհիվ ստեղծվում է միջհամայնքային տրանսպորտային կապ՝ դարձնելով հասարակական տրանսպորտը հասանելի բոլորին՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց, բարձրացնելով ուղևորափոխադրումների որակը և բնակչության մոբիլության մակարդակը, հետևելով շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին:


Ավելի վաղ՝ այս տարի, ՔՈԱՖ-ն ու ճապոնիայի դեսպանատունը կնքել էին դրամաշնորհի համաձայնագիր, որով 90,000 ԱՄՆ դոլար էր տրամադրվել Լոռու հասարակական տրանսպորտի ցանցն արդիականացնելու համար: Նախաձեռնության շրջանակներում ՔՈԱՖ-ը գնել է նոր, հարմարավետ ավտոբուս, ինչը հասարակական տրանսպորտով երթևեկությունը հասանելի է դարձնում բոլորին՝ այդ թվում տարեցներին ու հաշմանդամություն ունեցողներին: Դսեղ-Վանաձոր երթուղով իրար կապվող 7 բնակավայրերով ուղևորությունների հաճախականությունն ավելի բարձր կլինի՝ ներառելով կանգառներ նաև Դեբետում գտնվող ՔՈԱՖ ՍՄԱԲԹ կենտրոնի ու Դսեղի առողջության կենտրոնի մոտ:

Դսեղ-Վանաձոր երթուղու բնակավայրերում կկառուցվի 4 նոր կանգառ և կտեղադրվի երկու ավտոբուսի կանգառի երկու նշան՝ չվացուցակի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնելով ուղևորներին: Այս ջանքերը լրացնում են ՍՄԱԲԹ գյուղ նախաձեռնության շրջանակներում Դեբետում կառուցված ավտոբուսի կանգառի նախագծին:

Ենթակառուցվածքների արդիականացմանը զուգահեռ ՔՈԱՖ-ը նաև խթանում է թվային տեխնոլոգիաների կիրառումը. մշակվող բջջային հավելվածն իրական ժամանակում



CHILDREN
OF ARMENIA
FUND



From
the People of Japan

ուղևորության վերաբերյալ տեղեկատվությունն ստանալու և անկանխիկ վճարումներ կատարելու հնարավորություն կտա: Բնակիչները նաև կկարողանան ձեռք բերել ավտոբուսով ուղևորության պարբերաբար լիցքավորվող քարտեր:

Նոր ավտոբուսը Փամբակի համայնքապետարանին հանձնելու միջոցառումը մեկնարկեց ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում, որի ընթացքում իրենց խոսքն ասացին ՀՀ-ում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորին, Լոռու փոխմարզպետ Հովհաննես Ավետիսյանն ու ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը: Միջոցառման հյուրերը վայելեցին նոր ավտոբուսով առաջին ուղևորությունը ՍՄԱՐԹ կենտրոնից դեպի Դեբետի վարչական շենք, որտեղ էլ ավտոբուսը հանձնվեց Փամբակ Կոմունալ ՀՈԱԿ-ին:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Ծիրակի և Տավուշի մարզերի 66 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները: 2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: